## ՄԱՄՐՈՒԽԻ ՏԱՃԱՐԸ

Ադրբեջանական ՍՍՀ Զաքաթալայի շրջանի Մամրուխ գյուղի մոտ, ծառախիտ բլուրի վրա ցարդ պահպանվում է բոլորակ հատակագծով տաճարի ավերակ: Դեռևս 1974-75 թվերին այն չափագրել և նյութերը 1976 թ. հրատարակել է Դ. Ա. Ախունդովը[1]: Նա այդ տաճարին իր նոր աշխատության էջերում կրկին անդրադառնալով, ներկայացնում է հատակագիծը, կտրվածքը, աքսոնոմետրիկ տեսքը (դրսից և մասամբ՝ ներսից) և մեկ լուսանկար[2]:

Ավերակում պահպանվում են արևելակողմի խորանը, երկու կողմերի բոլորակ ավանդատները, հյուսիսային շքամուտքի մի մասը և մայր մույթերից երկուսը[3]: Ահա այս տվյալների վրա էլ ստեղծվել է տաճարի հատակագիծը: Համաձայն այդ հատակագծի ամբողջական տաճարի լայնքն ու երկայնքը հիմնական առանցքով միմյանց հավասար են, մոտ 18.8 մետր: Գլխավոր թմբկաձև ծավալի արտաքին տրամագիծը մոտ 13.5 մետր է:

Տաճարն, անկասկած, ունեցել է գմբեթ. որը բարձրացել է գմբեթատակ քառակուսին ստեղծող չորս մայր մույթերը միմյանց կապող կամարների վրա: Գմբեթակիր մայր մույթերը արտաքին թմբկապատից հեռացած են մոտ 1.5 մետրով, հետևաբար այդ չափն է ունեցել գմբեթատակ քառակուսին շրջանցող բոլորակ սրահը ամենանեղ տեղում (լայն տեղում այն 2 մետր է): Մայր մույթերի տաճարի կենտրոնին ուղղված անկյունավոր մասերը միացնող գծերով ստեղծվում է ճշգրիտ քառակուսի, իսկ արտաքին եզրերը միացնող գծերով՝ ութնիստ – չորս մեծ և չորս փոքր կողերով: Շատ հնարավոր է, որ այդպիսի նիստերով էլ ստեղծված լիներ նաև գմբեթաթմբուկը:

Արտաքին թմբկապատի հաստությունը մոտ 1.25 մետր է, արևելյան խորանի սահմաններում՝ 1.50 մ: Մուտքերը երեքն են՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից, բո-

---

[1] Д. А. Ахвундов, Путь развития круглых храмов Азербайджана, Уч. зап. АзИСИ, сер. X, N 1, Баку, изд. АзИСИ, 1976.

[2] Д. А. Ахундов, Архитектура древнего и раннесредневекого Азербайджана, Баку, 1986, с. 207-210.

[3] Там же, с. 207.

լորն էլ նախասրահներով, որոնք արտաքին բոլորակ պատից դուրս են գալիս երկու մետրի չափով:

Հյուսիսային և հարավային մուտքերի դուրս ցցված ծավալների և հարևանությամբ գոյություն ունեցող բոլորակ ավանդատների միջև ստեղծվել են փոքրիկ (մոտ 1.3 x 1.3 մ) աղոթասրահներ: Այս վերջիններիս արևելակողմում առկա են կիսաշրջան հիմքով խորշեր:

Դ. Ա. Ախունդովի Մամրուխի համար առաջարկած կտրվածքի գծագիրը պարունակում է ոչ միայն շատ անճշտություններ, այլ և խիստ անհավանական է: Այստեղ տաճարի ընդհանուր բարձրությունը 4, 3 անգամ բարձր է արևելյան խորանից: Եթե այս տաճարի խորանի բարձրությունը ընդամենը 4.7-5 մետր է, ապա եկեղեցու ողջ բարձրությունը 22.5 մետրի չէր հասնի:

Հայ ճարտարապետության մեջ մի դեպք կա միայն, որ եկեղեցու ողջ բարձրությունը խորանի բարձրության կրկնակի չափն ունի. այդպես է եռաստիճան հորինվածքով Բագարանում (624-631 թթ.): Արդ, ի՞նչ տվյալների հիման վրա է Դ. Ախունդովը երկաստիճան հորինվածքով Մամրուխը այդքան բարձր վերակազմել:

Անճշտություններ կան նաև Դ. Ա. Ախունդովի և Գ. Գ. Մամեդովայի կազմած տաճարի աքսոնոմետրիկ պատկերի գծագրում: Այստեղ մայր մույթերի լայնքը պատկերված է մոտ երկու անգամ փոքր, և որ տաճարի կենտրոնին ուղղված մասում ցույց է տրված մի պարզ անկյուն, մինչ իրականում այն երկանկյուն է՝ կենտրոնում գոյություն ունի անկյունաձև ուղղաձիգ ծավալ, այն գծագրում բացակայում է:

Դ. Ա. Ախունդովը, որ Մամրուխը ժամանակագրում է 3-րդ, 4-րդ դարերով, այսինքն՝ Վանքասարից անմիջապես հետո և Լեկիթից առաջ[4], գրում է. «... Մամրուխի տաճարը լուծված է Քիլիսադագի ուժեղ ազդեցությամբ... »: Վանքասար և Մամրուխ տաճարների միատեղ դիտարկումը մեզ բերում է այն հաստատ համոզման, որ Մամրուխը Վանքասարի համեմատությամբ ավելի հին է և, հետևաբար չէր կարող ստեղծվեր «... Քիլիսադագի ուժեղ ազդեցությամբ...»: Այն, որ Մամրուխի պատերը

[4] Д. А. Ахундов, Указ. соч., с. 210.

անհամեմատ հաստ են Վանքասարի պատերից և, որ այդ պատերը Մամրուխում բոլորակ են նաև դրսից և ոչ բազմանիստ, ինչպես Վանքասարում է, նշան է նրա, որ Մամրուխը Վանքասարից ավելի հին է: Ըստ երևույթին Մամրուխը կառուցվել է 7-րդ դարից ոչ վաղ: Այդ հուշարձաններում առկա են ձևեր, որոնք կենտրոնակազմ եկեղեցական շինություններում առաջին անգամ գործադրվել են առավելապես 7-րդ դարում:

Մամրուխի արևելյան խորանի առջևում կա զգալի չափերի նախախորան (ուղղանկյուն թաղածածկ տարածություն խորանի առջևում): Ավելի հին կենտրոնագմբեթ հուշարձաններում նախախորանը բացակայում է: Հետևում է, որ Մամրուխը չէր կարող կառուցված լինել 3-րդ, 4-րդ դարերում, ինչպես առաջարկում է Դ. Ախունդովը: Մամրուխի մայր մույթերի տաճարի կենտրոնին ուղղված մասը մշակված է երկանկյուն, այսինքն՝ այդտեղ առկա է անկյունով դուրս ցցված ծավալ: Առավել վաղ կառուցված հուշարձաններում այդտեղ լոկ անկյուն է: Հետևում է, որ Մամրուխը չէր կարող ավելի վաղ կառուցված լինել, քան 5-6-րդ դարերի այն հուշարձանները, որոնցում մայր մույթերի այդ մասում լոկ անկյուն է: Մամրուխի հյուսիսային և հարավային մուտքերին կից փոքր աղոթարան-խցերում արևելակողմի պատը մշակված է խորշի ձևով. այդպիսի մշակում ունեցող խցերը, ավանդատները և աղոթասրահները երևում են առավելապես 7-րդ դարում և ոչ վաղ:

Հատակագծային հորինվածքով, առավել ևս գմբեթատակ քառակուսու և այն ստեղծող չորս մայր մույթերի ձևով Մամրուխը բավական նման է 1083 թ. Ֆրանսիայի Կիմպերլեում կառուցված սբ. Խաչի եկեղեցուն[5]: Նրա համեմատությամբ Մամրուխն, իհարկե, հին է և ձևերն էլ պարզ:

[5] А. В. Кузнецов, Тектоника и конструкция центрических зданий, Москва, 1951, с. 188.




*Գծ. 1 - Մամրուխի եկեղեցու հատակագիծը (ըստ Ախունդովի)*



*Գծ. 2 - Մամրուխի եկեղեցու կտրվածքը (ըստ Ախունդովի)*



*Գծ. 3 - Մամրուխի եկեղեցու աքսոնոմետրիան (ըստ Ախունդովի և Մամեդովայի)*